ընօք և կարգադրութեամբ զարդարիլ պատիւս ազատութեան իւրեանց, Ջանալ վասն ստանալոյ ազատութիւն 'ի բռնաւորացէ, և թափիլ յաշխարհս իւրեանց 'ի լծորդութենէ բռնաւորաց, խորհուրդն իմ մի լինիցի հակառակ և անիրաւ 'ի միտս բռնաւորաց մերոց, քանզի կարգադրութեանն առաջին հատորն մեր յիշեցեալ զի լինիցուք մեք տէր միմիայն յաշխարհին մերոյ և թոյլ մի տացուք, զի քայլ մի 'ի յերկրէ այլոց աւելանալոյ վասն մեր, և 'ի մէնջ պակասիլ վասն այլոց, ուրեմն Ջանալ և աշխատ առնել ստանալ այն, որ սեպհական ժառանգութենէ Հայոց ոչ է անիրաւութիւն եթէ ոչ արդարութիւն։

Յաւել քան զայս աւարտ արարիցս խօսքն իմ, թողլով ամենայն մասունք գրեցելոց իմոց առ 'ի աշխատասիրութիւնս հանճարեղաց և իմաստնոց, զի նոքայ լցուցանեն պակասութիւնն ասացելոց իմոց և դառնամ առ 'ի սահմանս կարգադրութեան, որ է հիմն հաստատութեան վասն փրկութեան յազգէն մերոյ և կերպն բարեպէս կառավարութեան յազգ և յաշխարհն Հայոց։